«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

Հանրապետական հանրակրթական բաց օլիմպիադա մայրենիից

2025-2026 ուստարի

5-րդ դասարան

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...

Եղիշե Չարենց

Սիրելի՛ բարեկամ, կարդա այս գրվածքը, որի հեղինակը Վիլյամ Սարոյանն է:

Կատարի՛ր առաջադրանքները

**1.** Դու ի՞նչ բառեր գիտես, որոնք կարող ես կիրառել այո կամ ոչ բառերի փոխարեն: Լրացրո՛ւ աղյուսակը **(10 միավոր):**

| ԱՅՈ<br>Հաստատում | ՈՉ<br>Ժխտում |
|---|---|
| Հա, անշուշտ | չէ |
| անպայման | երբեք |
| անկասկած | ոչ մի դեպքում |
| անխոս | Ոչ մի պարագայում |
| անպատճառ,<br>անտարակույս,<br>առանց այլևայլության,<br>արդարև,<br>բնականաբար | Կարող են<br>լինել ժխտում<br>արտահայտող այլ բառեր և կապակցություններ |

**2.** Տեքստի ո՞ր բառերը կփոխարինես տրվածներով՝ վաղնջական, ատիճանաբար, տաղտուկ, բղավել, խորհել: Բառերը գրի՛ր կողք կողքի և նույն տողում **(5 միավոր):**

Վաղնջական-հինավուրց

Աստիճանաբար-կամաց-կամաց

Տաղտուկ-ձանձրույթ

Բղավել-գոռալ

Խորհել-մտածել

**3.** Տեխստի ո՞ր բառերի հակառակ իմաստն են արտահայտում տրվածները՝ մրմնջալ, ֆրֆջալ, տհաճություն, նուրբ, արագորեն: Բառերը գրի՛ր կողք կողքի և նույն տողում **(5** միավոր**)**:

Մրմնջալ-գոռալ

Ֆրֆջալ-լալ

Տհաճություն-հաճույք

Նուրբ-կոպիտ

Արագորեն- կամաց-կամաց

**4.** Նշի՛ր հնարավորինս շատ բառեր, որոնք իրենց կազմում ունեն չորս թվականը կամ դրա իմաստն արտահայտող արմատը **(10** միավոր**)**:

Տասնչորս, չորսբոլորը, չորեքկողմ, չորրորդ, չորեքշաբթի, չորեքթաթ, քառյակ, քառօրյա, քառակողմ, քառակուսի, քառատող, քառանկյուն, քառաբաժան և այլն:

**5.** Տեխստի ո՞ր բառը կգրես տրված արմատների կողքին: Վերհիշի՛ր և գրի՛ր **5**-ական բառ, որոնց կազմում կան տրված արմատները **(10** միավոր**)**:

Տեխստից ընտրած բառը-լսել

լուր—լրաբեր, լրագիր, անլուր, լրատվական, լրտես, լրահոս

Լուռ---լռել, լռակյաց, լուռումունջ, լռելյայն, անլռելի,

**6.** Ի՞նչ ես կարծում, արդյոք բառերը կարևո՞ր են ու և ցանկացած մարդու կյանքում: Վերաբերմունքդ արտահայտելու համար հեքիա՛թ հորինիր բարի և չար բառերի մասին: Պահպանի՛ր հեքիաթի գրության բոլոր կանոնները **(10** միավոր**)**:

Հեքիաթի գնահատման սանդղակ

| Միավոր | Նկարագրություն |
| --- | --- |
| 10 | 1. Պահպանել է հեքիաթի գրության բոլոր կանոնները՝ սկիզբ (մի ժամանակ, ժամանակին, կար-չկար, լինում է, չի լինում), հիմնական մաս (զարգացող գործողություններ), ավարտ (բարին հաղթում է. երկնքից երեք խնձոր է ընկնում):<br>2. Դրսևորել է երևակայություն, ստեղծարարություն. գրել է ասելիք ունեցող, մտածելու տեղիք տվող հետաքրքիր հեքիաթ:<br>3. Բառապաշարը հարուստ է. կիրառում է պատկերավորման միջոցներ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն:<br>4. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության սխալներ և վրիպակներ չկան: |
| 9-8 | 1. Պահպանել է հեքիաթի գրության բոլոր կանոնները՝ սկիզբ (մի ժամանակ, ժամանակին, կար-չկար, լինում է, չի լինում), հիմնական մաս (զարգացող գործողություններ), ավարտ (բարին հաղթում է. երկնքից երեք խնձոր է ընկնում):<br>2. Դրսևորել է երևակայություն, ստեղծարարություն. գրել է ասելիք ունեցող, մտածելու տեղիք տվող հետաքրքիր հեքիաթ:<br>3. Բառապաշարը հարուստ է. կիրառում է պատկերավորման միջոցներ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն:<br>4. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության 2-3 սխալ է թույլ տվել: |
| 7-6 | 1. Հիմնականում պահպանել է հեքիաթի գրության կանոնները՝ սկիզբ, հիմնական մաս, ավարտ:<br>2. Երևակայություն, ստեղծարարություն առանձնապես չի դրսևորել:<br>3. Բառապաշարը հարուստ չէ. պատկերավորման միջոցներ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն, համարյա չի կիրառում:<br>4. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության 4-5 սխալ է թույլ տվել: |
| 5-4 | 1. Մասամբ պահպանել է հեքիաթի գրության կանոնները՝ սկիզբ, հիմնական մաս, ավարտ:<br>2. Մասամբ դրսևորել է երևակայություն, ստեղծարարություն:<br>3. Բառապաշարը հարուստ չէ. պատկերավորման միջոցներ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն, չի կիրառում:<br>4. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության 6-8 սխալ է թույլ տվել: |
| 3-2 | 1. Հեքիաթի գրության կանոնները չի պահպանել. գրվածքը չունի սկիզբ, հիմնական մաս, ավարտ:<br>2. Չի դրսևորել է երևակայություն, ստեղծարարություն:<br>3. Բառապաշարն աղքատիկ է. պատկերավորման միջոցներ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն, չի կիրառում:<br>4. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության 9-10 սխալ է թույլ տվել: |
| 1 | Հեքիաթ չի գրել, չնայած ինչ-որ շարադրանք ունի: |
| 0 | 7-րդ առաջադրանքը չի կատարել: |